Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2021

«Էջմիածնի քաղաքապետարանի թիվ 13 մանկապարտեզի վերանորոգման համար դրամաշնորհային ծրագրի» ստորագրման արարողություն

2021 թ. դեկտեմբերի 1-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում տեղի ունեցավ «Էջմիածնի քաղաքապետարանի թիվ 13 մանկապարտեզի հիմնանորոգման ծրագրի» 90181 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում:

Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիմայի և Էջմիածնի քաղաքապետարանի թիվ 13 մանկապարտեզի տնօրեն Աննա Սողոմոնյանի միջև: Արարողությանը ներկա էին նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ պարոն Արկադի Պապոյանը և Էջմիածնի քաղաքապետի տեղակալ պարոն Միեր Մկրտչյանը:

Ծրագրի նպատակն է բարելավել Էջմիածնի թիվ 13 մանկապարտեզի երեխաների և ուսուցիչների ուսումնական և աշխատանքային միջավայրը՝ վերանորոգելով մանկապարտեզի երկու մասնաշենքերի դասասենյակները, մարզադահլիճը, միջոցառումների սրահը, զուգարանները, խոհանոցը և պատշգամբները: Արդյունքում ավելի քան 110 երեխաներ և ուսուցիչներ կօգտվեն մանկապերտեզի բարելավված պայմաններից:

Ջերմորեն ողջունելով բոլոր հյուրերին՝ պարոն Պապոյանը վստահություն հայտնեց, որ այս ծրագիրը հնարավորություն կտա ոչ միայն ամրապնդել Հայաստանի և Ճապոնիայի հարաբերությունները, այլ նաև իրականացնել կրթական զարգացման այլ ծրագրեր: Պարոն Պապոյանը իր խոսքում նաև շնորհակալություն հայտնեց Ճապոնիայի կառավարությանը նախորդ ծրագրերի համար և հայտնեց իր ցանկությունը շարունակական համագործակցության համար:

Դեսպան Ֆուկուսիման, իր հերթին, կարևորեց պատշաճ կրթական միջավայրի կարևորությունը ուսումնական ամբողջ գործընթացում և նշեց, որ այս արարողությունը ՝ ուղղված կրթական հաստատությունների բարելավմանը, Ճապոնիայի շարունակական աջակցության և հաստատուն հանձնառության ևս մեկ դրսևորում է:

Իր հերթին, պարոն Մկրտչյանն իր երախտագիտությունը հայտնեց Ճապոնիայի կառավարությանը և հույս հայտնեց, որ այս ծրագիրը կունենա արդյունավետ ընթացք և հիմք կհանդիսանա հետագա համագործակցության համար: Իր հերթին, Տիկին Սողոմոնյանը

շնորհակալություն հայտնեց Ճապոնիայի կառավարությանն և ընդգծեց ծրագրի կարևորությունը, որն ուղղված է ոչ միայն կրթական միջավայրի բարելավմանն, այլև 30 նոր աշակերտ ընդունելու և ևս 2 նոր աշխատակցի ընդունման կարողությունների ընդլայմանը:

Դեսպան Ֆուկուշիմայի շնորհավորական ուղերձը

Տիկին Սողոմոնյանի ելույթը

Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրելիս

Արարողության հարգարժան մասնակիցները